



Պարույր Սևակ

Խնայում եմ

Խնայում եմ ո՛չ թե սերըս. ճի՛շտ հասկացիր:
Խնայում եմ քո նոր զարթնած սի՛րտը միայն
Տարիքն առած ինձ պես մեկի խելատ սիրուց,
Ինչպես որ հին - նստած գինուց,
Անփորձները շուտ են հարբում
Եվ շատ ուշ են ուշքի գալիս...
Խնայում եմ միակ հույսըս,
Ինչպես նաև պատավ մորըս,
Թե չէ, գիտե՛ք, մե՛կ էլ տեսար՝
Ինչ-որ հոգնած մի վայրկյանի,
Վերջ տվեցի հիմար կյանքիս...
Թե չեմ ասում,
Որ մեր տնկած խնձորենին ուրի դարձավ,
Արդյոք ո՞ւմ եմ ես խնայում.
Մե՞զ՝ խեղճերիս,
Թե՞ ուռենին...
Թե չեմ ասում,
Որ հատակին թափված յուղը
Էլ ոչ մի կերպ ճաշ չի դառնա,
Ո՞ւմ եմ արդյոք խնայում,
Պարզ է, որ մե՛զ,

Ոչ թե յուրը...
Խնայում եմ ես ոչ այնքան ձեր ակա՛նջը,
Որքան ա՛շքը,
Թե չէ, գիտե՞ք,
Ձեզ բոլորիդ այն ցույց կտամ,
Ինչ ես վաղուց նկատում եմ...
Խնայում եմ
Ու - ծալում եմ ցուցամատը...

08.XII.1957թ.

Մոսկվա